

Կանաչ Կլիմայի Հիմնադրամ (GCF) Կանաչ Տնտեսության Ֆինանսավորման տարածաշրջանային ծրագիր (GEFF) - ԿՏՖԾ Հայաստան II – Ինեկոբանկ

Երկիր	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համար	55161
Բիզնես ոլորտ	Բանկային
Ծանուցման տեսակ	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա	Ֆինանսական հաստատություն (ՖՀ)
Հաստատման նախատեսվող ամսաթիվ	20 փետրվարի 2024թ.
Կարգավիճակ	Հաստատված է
Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվ	22 փետրվարի 2024թ.

Ծրագրի նկարագրություն

Մինչև 10 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ առաջնային վարկի տրամադրում Ինեկոբանկ ՓԲԸ-ին, որից մինչև 7.5 միլիոն ԱՄՆ դոլարը տրամադրվելու է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), իսկ մինչև 2.5 միլիոն ԱՄՆ դոլարը՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի (ԿԿՀ) կողմից՝ ԿԿՀ-Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագրի (ԿՏՖԾ) շրջանակներում:

Ծրագրի նպատակները

Վարկային միջոցները կօգտագործվեն տեղական մասնավոր հատվածի առևտրային ենթավարկառուների կողմից Հայաստանում ԿՏՖԾ ստանդարտներին և հաշվետվությունների պահանջներին համապատասխան և կտրամադրվեն կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականության տեխնոլոգիաներին ուղղված ներդրումների ֆինանսավորմանը՝ գենդերային բաղադրիչի ներգրավմամբ: Վարկային միջոցների 100 տոկոսը կուղղվի Կանաչ տնտեսության անցումային ներդրումներին: Հաճախորդը Տեխնիկական աջակցության (ՏԱ) շրջանակներում ծրագրի խորհրդատուների կողմից կստանա վերապատրաստումներ, ինչպես նաև կարողությունների զարգացման և ծրագրի իրականացման աջակցություն:

Անցումային ազդեցություն

Վաղ անցումային ազդեցության ցուցանիշ (ETI)՝ 75

Ծրագիրը սատարում է Կանաչ անցումային ազդեցության որակին՝ տրամադրելով ֆինանսական միջոցներ և գիտելիքներ ֆինանսական միջնորդներին, որոնք, իրենց հերթին, ֆինանսավորում են մասնավոր հատվածի՝ կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության տեխնոլոգիաներին և լուծումներին ուղղված ներդրումները: Սա կնպաստի Հայաստանի անցմանը էկոլոգիապես կայուն, ցածր ածխածնային և կլիմայի նկատմամբ կայուն տնտեսության:

Հաճախորդի մասին տեղեկատվություն

ԻՆԵԿՈՐԱՆԿ ՓԲԸ

Ինեկոբանկ ՓԲԸ-ն ՎԶԵԲ-ի երկարամյա գործընկեր բանկ է: 2023 թվականի 4-րդ եռամսյակի տվյալներով այն Հայաստանի հինգերորդ խոշոր բանկն է ընդհանուր ակտիվներով ու վարկային պորտֆելով՝ 6.4% և 6.6% համապատասխան շուկայական մասնաբաժիններով:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

7,500,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեքը

10,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական ու սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ (FI) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2019թ.): Ինեկոբանկը գործող վարկառու է և առկա վարկային պարտավորությունների շրջանակներում գործում է բնապահպանական ու սոցիալական (ԲՍ) պահանջներին համապատասխան: Ինեկոբանկից պահանջվում է շարունակել համապատասխանել Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ Պահանջներին (PR), կիրառել ՎԶԵԲ-ի բնապահպանական ու սոցիալական պահանջները կորպորատիվ վարկերի, ՓՄՁ-ների և միկրո վարկերի մասով, այդ թվում ապահովել համապատասխանություն ՎԶԵԲ-ի ԲՍ ընդլայնված բացառման և ուղղորդիչ ցուցակներին, ինչպես նաև ՎԶԵԲ-ին ներկայացնել տարեկան բնապահպանական ու սոցիալական հաշվետվություններ: ԿՏՖԾ-ի միջոցով ֆինանսավորված ենթավարկառուներից կպահանջվի համապատասխանել շրջակա միջավայրի, առողջության, անվտանգության և աշխատանքային ստանդարտների ազգային պահանջներին:

Տեխնիկական աջակցություն

Ծրագրին կտրամադրվի Կլիմայի ներդրումային հիմնադրամի և ԿԿՀ-ի կողմից ֆինանսավորվող ՏԱ, որի նպատակն է աջակցել Հայաստանի ֆինանսական միջնորդներին՝ այդ թվում Ինեկոբանկին, գենդերային բաղադրիչի ներառմամբ կարողությունների զարգացման, շուկայավարման, ծրագրերի գնահատման, ընդհանուր մոնիթորինգի և հաշվետվողականության հարցերում: Ավելին, Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի (Scaling-up Renewable Energy Programme) կողմից բանկի հաճախորդներին որպես ներդրումային խրախուսում կտրամադրվեն մինչև 1 միլիոն ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհներ՝ նպատակ ունենալով խթանել կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության ծրագրերը, որոնք ունեն նշանակալի դրական արտաքին ազդեցություն և խրախուսել սկսնակ գործարարներին որդեգրել նորարարական տեխնոլոգիաներ:

Հավելյալություն

- **Ֆինանսական կառուցվածք.** ՎԶԵԲ-ն առաջարկում է շուկայում առաջարկվող միջինից ավելի երկար ժամկետով ֆինանսավորում, ինչն անհրաժեշտ է ծրագրի իրականացման համար:
- **Ֆինանսավորման նորարարական կառուցվածքներ և/կամ գործիքներ:** ՎԶԵԲ-ն առաջարկում է նորարարական կանաչ ֆինանսավորման գործիք, որը ֆինանսավորման կառուցվածքի մեջ միավորում է այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են կլիմայական և բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) ստանդարտները և/կամ կլիմայական և ԲՍԿ ռիսկերի նկատառումները: Օրինակ, արտոնյալության մակարդակի ճշգրտում՝ կլիմայական ռիսկի մակարդակը և/կամ կլիմայի ոլորտում դրական ազդեցությունները (օրինակ՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը և կլիմայի կայունության առավելությունները) արտացոլելու համար:
- **Ստանդարտների սահմանում.** Հաճախորդը ձգտում է ստանալ ՎԶԵԲ-ի գիտելիքն ու փորձը ավելի մեծ ներառականության ու գենդերային ստանդարտների և/կամ հավասար հնարավորությունների գործողությունների պլանների մասով (**Gender SMART**). Կանայք, Հայաստանում կանաչ ֆինանսավորման հասանելիության հարցում, անհամաչափորեն ավելի շատ խոչընդոտների են առերեսվում: Այս գենդերային բացերը հասցեագրելու նպատակով հաճախորդը օգտվում է ՎԶԵԲ-ի գիտելիքից ու փորձից՝ ընդլայնելու համար կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունները ֆինանսավորման հասանելիության հարցում, ԿՏՖԾ-ի շրջանակներում կանաչ տեխնոլոգիաներ որդեգրելու համար և կին ու տղամարդ ենթավարկառուներին օգնելու ուժեղացնել իրենց դիմադրողականությունը փոփոխվող կլիմայի համատեքստում:

Ընկերության կոնտակտային տվյալները

Հայկ Ոսկանյան

Hayk.Voskanyan@inecobank.am

<https://www.inecobank.am>

Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎԶԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՇԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՇԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՇԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՇԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՇԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին [Eլ-փոստով՝ compliance@ebrd.com](mailto:compliance@ebrd.com): Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՇԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՇԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՉԱԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՅԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՉԱԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՅԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՅԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՅԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: